ԽՈՒՄԲ 8

116 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. Կահավորված թափքում մարդ փոխադրող բեռնատար ավտոմոբիլների երթեւեկությունը թույլատրվում է ոչ ավել, քան

1. **60կմ/ժ արագությամբ:**
2. 70կմ/ժ արագությամբ:
3. 80կմ/ժ արագությամբ:

Պատ.՝ 1

---

2. Այս նախազգուշացնող նշանը բնակավայրերից դուրս՝ մինչեւ վտանգավոր հատվածի սկիզբը, ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում:



1. 50 - 100մ
2. **150 - 300մ**
3. 300 - 500մ

Պատ.՝ 2

---

3. Երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է

1. **ոչ ավել, քան 60կմ/ժ արագությամբ:**
2. ոչ ավել, քան 70կմ/ժ արագությամբ:
3. ոչ ավել, քան 80կմ/ժ արագությամբ:

Պատ.՝ 1

---


4. Տրանսպորտային միջոցների երթեւեկությունը բնակավայրերում թույլատրվում է

1. **ոչ ավել, քան 60կմ/ժ արագությամբ:**
2. ոչ ավել, քան 80կմ/ժ արագությամբ:
3. ոչ ավել, քան 90կմ/ժ արագությամբ:

Պատ.՝ 1

---

5. **Ո՞ր ուղղությամբ է թույլատրվում երթեւեկությունը:**



1. Միայն ուղիղ
2. Ուղիղ եւ դեպի աջ
3. **Ուղիղ, դեպի աջ եւ դեպի ձախ**
4. Բոլոր ուղղություններով

Պատ.՝ 3

---

6. **Միջքաղաքային ավտոբուսների երթևեկությունը բնակավայրերից դուրս թույլատրվում է՝**

1. 70 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
2. **90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:**
3. 110 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Պատ.՝ 2

---

7. **Թույլատրվու՞մ է մերձքաղաքային, միջմարզային և միջքաղաքային ավտոբուսների վարորդներին բնակավայրերում գերազանցել 60 կմ/ժ արագությունը:**

1. Թույլատրվում է՝ միայն միևնույն ուղղությամբ երկու և ավելի գոտի ունեցող ճանապարհներին:
2. Թույլատրվում է:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

8. **Թույլատրվու՞մ է միջքաղաքային ավտոբուսի վարորդին բնակավայրերից դուրս գերազանցել 70 կմ/ժ արագությունը:**

1. Թույլատրվում է՝ միայն երթևեկության համար տվյալ ուղղությամբ երկու և ավելի գոտի ունեցող ճանապարհներով երթևեկելիս:
2. **Թույլատրվում է, եթե չի գերազանցում 90 կմ/ժ արագությունը:**
3. Արգելվում է:

Պատ.՝ 2

---

9. **Քարշակման ժամանակ՝ վթարային լուսային ազդանշանի բացակայության կամ անսարքության դեպքում, «Վթարային կանգառ» նշանը տեղադրվում է**

1. **Քարշակվող տրանսպորտային միջոցի հետեւի մասում:**
2. Քարշակող տրանսպորտային միջոցի առջեւի մասում:
3. Վարորդի հայեցողությամբ՝ տրանսպորտային միջոցներից մեկի վրա՝ տեսանելի տեղում:

Պատ.՝ 1

---

10. Կոշտ կցիչով քարշակման ժամանակ տրանսպորտային միջոցների միջեւ հեռավորությունը չպետք է գերազանցի

1. 2 մ:
2. 3 մ:
3. **4 մ:**
4. 5 մ:
5. 6 մ:

Պատ.՝ 3

---

11. Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ նշվածներից ո՞ր դեպքում է թույլատրվում մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոմոբիլում:

1. Թույլատրվում է ավտոբուսում
2. **Թույլատրվում է թեթեւ մարդատար ավտոմոբիլում**
3. Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի թափքում՝ կոշտ կցիչով քարշարկելիս

Պատ.՝ 2

---

12. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթեւեկությունը՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներով քարշակում կատարելիս:

1. 30 կմ/ժ
2. 40 կմ/ժ
3. **50 կմ/ժ**
4. 60 կմ/ժ
5. 70 կմ/ժ

Պատ.՝ 3

---


13. Քարշակումը մերկասառույցի պայմաններում արգելվում է

1. **Ճկուն կցիչով:**
2. Կոշտ կցիչով:
3. Մասնակի բեռնման եղանակով:

Պատ.՝ 1

---

14. **Ինչպիսի՞ առավելագույն արագությամբ կարող է իրականացվել քարշակումը տվյալ պայմաններում:**



1. 30կմ/ժ
2. **50կմ/ժ**
3. 70կմ/ժ
4. 80կմ/ժ

Պատ.՝ 2

---

15. **Թույլատրվու՞մ է արդյոք ճկուն կամ կոշտ կցիչով քարշակման դեպքում մարդկանց փոխադրումը քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցում:**

1. Թույլատրվում է՝ ավտոբուսում եւ տրոլեյբուսում
2. Թույլատրվում է՝ միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլում
3. Թույլատրվում է՝ բեռնատար ավտոմոբիլի թափքում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում
4. **Թույլատրվում է՝ բեռնատար ավտոմոբիլի խցիկում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում**
5. Արգելվում է:

Պատ.՝ 4

---

16. **Քարշակումը մերկասառույցի պայմաններում**

1. Արգելվում է
2. Թույլատրվում է
3. **Թույլատրվում է՝ կոշտ կցիչով կամ մասնակի բեռնման եղանակով քարշակելիս**

Պատ.՝ 3

---

17. **Ինչպիսի՞ առավելագույն արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների քարշակումը ճկուն կցիչով:**

1. 70կմ/ժ
2. 60կմ/ժ
3. **50կմ/ժ**
4. 40կմ/ժ
5. 30կմ/ժ

Պատ.՝ 3

---

18. Ո՞ր դեպքում է արգելվում քարշակումը:

1. Մերկասառույցի պայմաններում՝ կոշտ կցիչով
2. **Մերկասառույցի պայմաններում՝ ճկուն կցիչով**
3. Կողային կցորդով մոտոցիկլներով

Պատ.՝ 2

---

19. Բնակավայրերից դուրս մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս երթեւեկության արագությունը չպետք է գերազանցի

1. 30կմ/ժ:
2. 40կմ/ժ:
3. **50կմ/ժ:**
4. 60կմ/ժ:
5. 70կմ/ժ:

Պատ.՝ 3

---

20. Քարշարկման ժամանակ տրանսպորտային միջոցների միջեւ ի՞նչ հեռավորություն պետք է ապահովի ճկուն կցիչը:

1. 1 - 3մ
2. 2 - 4մ
3. 3 - 6մ
4. **4 - 6մ**
5. 4 - 8մ

Պատ.՝ 4

---

21. Կոշտ կցիչով քարշակման ժամանակ հեռավորությունը տրանսպորտային միջոցների միջեւ պետք է լինի ոչ ավել, քան

1. **4մ:**
2. 5մ:
3. 6մ:

Պատ.՝ 1

---

22. Թույլատրվու՞մ է արդյոք քարշակել կողային կցորդով մոտոցիկլները:

1. Թույլատրվում է՝ միայն կոշտ կցիչով
2. Արգելվում է
3. **Թույլատրվում է**

Պատ.՝ 3

---

23. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթեւեկությունը ճկուն կցիչով քարշակելիս:

1. 70կմ/ժ
2. 60կմ/ժ
3. **50կմ/ժ**
4. 40կմ/ժ
5. 30կմ/ժ

Պատ.՝ 3

---

24. **Թույլատրվու՞մ է արդյոք մարդկանց փոխադրումը բեռնատար կցորդում:**

1. **Արգելվում է**
2. Թույլատրվում է
3. Թույլատրվում է միայն բեռն ուղեկցող անձանց

Պատ.՝ 1

---

25. **Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ թույլատրվու՞մ է մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոբուսում:**

1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է մինչև 8 ուղևոր:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

26. **Ավտոբուսի քարշակումը մերկասառույցի պայմաններում արգելվում է՝**

1. **Ճկուն կցիչով:**
2. Կոշտ կցիչով:

Պատ.՝ 1

---

27. **Թույլատրվու՞մ է արդյոք ճկուն կամ կոշտ կցիչով քարշակման դեպքում մարդկանց փոխադրումը քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցում:**

1. Թույլատրվում է ավտոբուսում եւ տրոլեյբուսում
2. **Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի խցիկում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում**
3. Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի թափքում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում
4. Արգելվում է

Պատ.՝ 2

---

28. **Մարդկանց փոխադրումն արգելվում է, եթե՝**

1. Ձբոսաշրջության երթուղիներով երթևեկող ավտոբուսի սրահում մարդկանց թիվը գերազանցում է կահավորված նստատեղերի քանակը:
2. Միջքաղաքային երթուղիներով երթևեկող ավտոբուսի սրահում մարդկանց թիվը գերազանցում է կահավորված նստատեղերի քանակը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

29. **Ավտոբուսով երեխաների կազմակերպված խմբեր փոխադրելիս սրահում պետք է գտնվի առնվազն՝**

1. **Մեկ չափահաս ուղեկցող:**
2. Երկու չափահաս ուղեկցող:
3. Երեք չափահաս ուղեկցող:

Պատ.՝ 1

---

30. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել միջմարզային և միջքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսներին՝ բնակավայրերից դուրս բոլոր ճանապարհներին:

1. 60 կմ/ժ:
2. 70 կմ/ժ:
3. **90 կմ/ժ:**

Պատ.՝ 3

---

31. Թույլատրվու՞մ է ավտոբուսներին բնակավայրերից դուրս երթևեկել 70 կմ/ժ արագությամբ:

1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

32. Միջքաղաքային փոխադրումներ իրականացնող ավտոբուսների երթևեկությունը բնակավայրերում թույլատրվում է ոչ ավելի քան՝

1. **60 կմ/ժ:**
2. 70 կմ/ժ:
3. 90 կմ/ժ :

Պատ.՝ 1

---

33. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային փոխադրումներ իրականացնող ավտոբուսների երթևեկությունը բնակավայրերից դուրս՝

1. 60 կմ/ժ:
2. 70 կմ/ժ:
3. **90 կմ/ժ:**

Պատ.՝ 3

---

34. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում ավտոբուսների երթեւեկությունը «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջը» նշաններով կահավորված տարածքներում:

1. **20կմ/ժ**
2. 30կմ/ժ
3. 40կմ/ժ

Պատ.՝ 1

---

35. Թույլատրվու՞մ է կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոբուսում:

1. Թույլատրվում է:
2. **Արգելվում է:**

Պատ.՝ 2

---

36. Թույլատրվու՞մ է ուղևորների փոխադրումը քարշակող ավտոբուսում:

1. Արգելվում է:
2. **Թույլատրվում է:**

Պատ.՝ 2

---

37. Այս նշանի առկայության դեպքում ի՞նչ առավելագույն արագությամբ երթևեկելու իրավունք ունեն միջքաղաքային ավտոբուսների վարորդները:



1. 70 կմ/ժ:
2. **90 կմ/ժ:**
3. 110 կմ/ժ:

Պատ.՝ 2

---

38. Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող է երթևեկել քարշակող ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում:



1. **50 կմ/ժ:**
2. 60 կմ/ժ:
3. 90 կմ/ժ:

Պատ.՝ 1

---

39. Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող է երթևեկել միջքաղաքային ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում:



1. 60 կմ/ժ:
2. 70 կմ/ժ:
3. 80 կմ/ժ:
4. **90 կմ/ժ:**

Պատ.՝ 4

---

40. Ի՞նչ արագությամբ կարող է շարունակել երթևեկությունը ավտոբուսի վարորդը տվյալ ճանապարհային նշանով նշված գոտում:



1. 60 կմ/ժ-ից պակաս:
2. Ոչ պակաս 60 կմ/ժ, բայց ոչ ավելի քան 70 կմ/ժ:
3. **Ոչ պակաս 60 կմ/ժ, բայց ոչ ավելի քան 90 կմ/ժ:**

Պատ.՝ 3

---

41. Այս նշանով կահավորված ճանապարհներին միջքաղաքային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթևեկել ոչ ավելի քան՝



1. **60 կմ/ժ արագությամբ:**
2. 80 կմ/ժ արագությամբ:
3. 90 կմ/ժ արագությամբ:

Պատ.՝ 1

---

42. Այս նշանով կահավորված ճանապարհներին միջքաղաքային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթեւեկելու ոչ ավել քան՝



1. 60 կմ/ժ:
2. 80 կմ/ժ:
3. **90 կմ/ժ:**

Պատ.՝ 3

---

43. **Թույլատրվու՞մ է ուղևորների փոխադրումը ավտոբուսի սրահում տվյալ իրավիճակում:**



1. **Արգելվում է:**
2. Թույլատրվում է:
3. Թույլատրվում է նստատեղերի քանակին համապատասխան:

Պատ.՝ 1

---

44. **Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ թույլատրվու՞մ է ուղևորների փոխադրումը քարշակվող ավտոբուսում:**

1. **Արգելվում է:**
2. Թույլատրվում է կոշտ կցիչով քարշակման ժամանակ:
3. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

---

45. **Քարշակման ժամանակ քարշակվող տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինեն**

1. Լապտերների հեռահար լույսերը:
2. Լապտերների մոտակա լույսերը:
3. **Վթարային լուսային ազդանշանը:**

Պատ.՝ 3

---

46. **Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային ավտոբուսների երթևեկությունն ավտոմայրուղիներով:**

1. 70 կմ/ժ:
2. 80 կմ/ժ:
3. **90 կմ/ժ:**
4. 100 կմ/ժ:
5. 110 կմ/ժ:

Պատ.՝ 3

---

47. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում ավտոբուսի երթևեկությունն այս ճանապարհային նշանի ազդեցության ճանապարհահատվածներում:



1. 70 կմ/ժ:
2. 80 կմ/ժ:
3. **90 կմ/ժ:**
4. 100 կմ/ժ:
5. 110 կմ/ժ:

Պատ.՝ 3

---

48. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային ավտոբուսների երթևեկությունն ավտոմայրուղիներով:

1. 70 կմ/ժ:
2. 80 կմ/ժ:
3. 110 կմ/ժ:
4. 100 կմ/ժ:
5. **90 կմ/ժ:**

Պատ.՝ 5

---

49. Ի՞նչ արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների երթեւեկությունը «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշանների ազդեցության տարածքներում:

1. ոչ ավել, քան 5կմ/ժ
2. ոչ ավել, քան 10կմ/ժ
3. **ոչ ավել, քան 20կմ/ժ**

Պատ.՝ 3

---

50. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում թեթև մարդատար ավտոմոբիլների երթեւեկությունը այս ճանապարհային նշանի ազդեցության ճանապարհահատվածներում:



1. 70 կմ/ժ:
2. 80 կմ/ժ:
3. 90 կմ/ժ:
4. 100 կմ/ժ:
5. **110 կմ/ժ:**

Պատ.՝ 5

---

51. Մեխանիկական տրանսպորտային միջոց քարշակելիս այս ճանապարհի ո՞ր գոտիով կարող եք շարունակել երթևեկությունը:



1. **Միայն աջ**
2. Ցանկացած

Պատ.՝ 1

---

52. Ի՞նչ պայմաններ պետք է հաշվի առնի վարորդը թույլատրված սահմաններում արագություն ընտրելիս:

1. Ճանապարհային ծածկույթի վիճակը
2. Տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ
3. **Նշված երկու պայմանները**

Պատ.՝ 3

---

53. Թույլատրելի սահմաններում ի՞նչ առավելագույն արագություն պետք է ընտրի վարորդը:

1. **Այնպիսի արագություն, որ ապահովի տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը**
2. Ազատ է ընտրելու ցանկացած արագություն, որը չի գերազանցի առավելագույն թույլատրելին

Պատ.՝ 1

---

54. Վարորդին արգելվում է

1. Գերազանցել տվյալ տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով սահմանված առավելագույն արագությունը:
2. Գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը:
3. Առանց անհրաժեշտության ընթանալ շատ ցածր արագությամբ՝ խոչընդոտելով մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությունը:
4. Կտրուկ արգելակել, եթե դա անհրաժեշտ չէ ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար:
5. **Բոլոր նշված գործողությունները:**

Պատ.՝ 5

---

55. Ո՞ր նշանն է սահմանափակում արագությունը:



1. 1 և 3
2. 1 և 4
3. **2**
4. 2 և 3

Պատ.՝ 3

---

56. Վարորդին արգելվում է

1. Երկաթուղային գծանցը հատել ավելի, քան 30կմ/ժ արագությամբ:
2. Երկաթուղային գծանցը հատել 30 կմ/ժ-ից ցածր արագությամբ:
3. **Առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության գծանցով երթևեկել դանդաղընթաց մեքենաներով՝ 8 կմ/ժ-ից ցածր արագությամբ, և տափանների հետ կցված տրակտորներով:**

Պատ.՝ 3

---

57. **Խաչմերուկին մոտենալիս՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի այնպիսի արագությամբ, որ**

1. չգերազանցի տվյալ հատվածում սահմանված առավելագույն թույլատրելին:
2. **հնարավորություն ունենա կանգնելու և զիջելու անցման առաջնահերթության իրավունք ունեցող փոխադրամիջոցներին:**

Պատ.՝ 2

---

58. **Վարորդին արգելվում է բարձրացնել արագությունը,**

1. **եթե դա կխոչընդոտի իրեն վազանցող տրանսպորտային միջոցի վարորդին ավարտել վազանցը:**
2. եթե դա անհրաժեշտ է իրեն ճանապարհը զիջելու նպատակով կանգ առած վարորդի ճանապարհը ազատելու համար:
3. եթե դա կատարվում է խաչմերուկն ազատելու նպատակով:

Պատ.՝ 1

---

59. **Վարորդը պարտավոր է իջեցնել արագությունը**

1. երեխաների նստեցման և իջեցման ժամանակ «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով կահավորված տրանսպորտային միջոցներին մոտենալիս:
2. շլանալու դեպքում
3. երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում:
4. կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում, ինչպես նաև կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս:
5. **բոլոր նշված դեպքերում**

Պատ.՝ 5

---

60. **Ավտոբուսի վարորդը ո՞ր դեպքում պետք է միացնի վթարային լուսային ազդանշանը, եթե քարշակում է մեկ այլ մեխանիկական տրանսպորտային միջոց:**

1. Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի միայն քարշակող ավտոբուսի վրա հետևից երթևեկողներին զգուշացնելու համար
2. Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի և՛ քարշակող ավտոբուսի, և՛ քարշակվող տրանսպորտային միջոցի վրա առավելագույն տեսանելիություն ապահովելու համար
3. **Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի միայն քարշակվող տրանսպորտային միջոցի վրա**

Պատ.՝ 3

---

61. **Պարտադի՞ր է արդյոք քարշակվող տրանսպորտային միջոցի հետևի մասում տեղադրել «Վթարային կանգառ» նշանը, եթե վթարային լուսային ազդանշանը միացված է :**

1. Այո, երկու միջոցներն էլ պետք է կիրառվեն միաժամանակ
2. **Ոչ, «Վթարային կանգառ» նշանը տեղադրվում է միայն այն դեպքում, եթե վթարային լուսային ազդանշանը բացակայում է կամ անսարք է**

Պատ.՝ 2

---

62. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին առանց անհրաժեշտության երթևեկել ցածր արագությամբ:**

1. Թույլատրվում է, եթե վարորդը հոգնած է
2. **Արգելվում է, եթե դրանով խոչընդոտ է ստեղծում այլ տրանսպորտային միջոցների երթևեկության համար**
3. Թույլատրվում է միայն խաչմերուկներում երթևեկելիս կամ կարգավորողի ազդանշաններին հետևելիս

Պատ.՝ 2

---

63. **Արագություն ընտրելիս ավտոբուսի վարորդին արգելվում է՝**

1. **Գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը:**
2. Երթևեկել 60կմ/ժ-ից ցածր արագությամբ բոլոր այն ճանապարհներին, որտեղ տեղադրված չէ նվազագույն արագությունը սահմանափակող նշան:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

64. **Արագություն ընտրելիս ավտոբուսի վարորդին արգելվում է՝**

1. Փոխադրել ուղեբեռը տվյալ ճանապարհահատվածի համար սահմանված առավելագույն թույլատրելի արագությամբ, եթե բեռի փաստաթղթերում նշված չէ կոնկրետ արագության սահմանափակում:
2. **Գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

65. **Երթևեկության ընթացքում ավտոբուսի վարորդին արգելվում է՝**

1. **Կտրուկ արգելակել, եթե դա անհրաժեշտ չէ ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:**
2. Կատարել արգելակում այն դեպքերում, երբ հետևից ընթացող տրանսպորտային միջոցը չի պահպանում անվտանգ տարածություն:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

66. **Բնակավայրում «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառման դեպքում ո՞րն է երթևեկության առավելագույն թույլատրելի արագությունը, որը կարող է սահմանվել իրավասու մարմինների կողմից:**

1. **80կմ/ժ:**
2. 90կմ/ժ:
3. Ցանկացած արագություն, որն անվտանգ է տվյալ ճանապարհահատվածի համար:

Պատ.՝ 1

---

67. **Բնակավայրերից դուրս <<Առավելագույն արագության սահմանափակում>> նշանի կիրառման դեպքում ո՞րն է երթևեկության առավելագույն թույլատրելի արագությունը, որը կարող է սահմանվել իրավասու մարմիններ կողմից:**

1. 100կմ/ժ
2. **110կմ/ժ**
3. Ցանկացած արագություն, որն անվտանգ է տվյալ ճանապարհահատվածի համար

Պատ.՝ 2

---

68. Բնակավայրերում «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ առավելագույն թույլատրելի արագությունը սահմանվել է 80կմ/ժ: Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող են երթևեկել կահավորված թափքում մարդ փոխադրող ավտոմոբիլը և երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող ավտոմոբիլը:



1. 80կմ/ժ
2. 50կմ/ժ
3. **60կմ/ժ**

Պատ.՝ 3

---

69. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել ավտոբուսի վարորդին, երբ նա քարշակում է թեթև մարդատար ավտոմոբիլ:

1. **50կմ/ժ**
2. 60կմ/ժ
3. 90կմ/ժ

Պատ.՝ 1

---

70. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող ավտոբուսին բնակավայրերում:

1. 50կմ/ժ
2. **60կմ/ժ**
3. 40կմ/ժ

Պատ.՝ 2

---

71. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող ավտոբուսին բնակավայրից դուրս:

1. **60կմ/ժ**
2. 90կմ/ժ
3. 110կմ/ժ

Պատ.՝ 1

---

72. **Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել բնակավայրից դուրս այն ավտոբուսներին, որոնք չեն իրականացնում մերձքաղաքային, միջմարզային և միջքաղաքային փոխադրումներ:**

1. **70կմ/ժ**
2. 90կմ/ժ
3. 60կմ/ժ

Պատ.՝ 1

---

73. **Ավտոբուսի վարորդն պետք է ընտրի այնպիսի արագություն,**

1. **որպեսզի հնարավորություն ունենա ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը:**
2. որպեսզի հնարավորություն ունենա կանգ առնել միայն այն դեպքում, երբ տեսանելիության սահմաններում առկա է այլ տրանսպորտային միջոց կամ խոչընդոտ:
3. որպեսզի ապահովվի թվարկված երկու պայմաններն էլ:

Պատ.՝ 1

---

74. **Ի՞նչ պետք է ձեռնարկի ավտոբուսի վարորդը երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում, որը նա ի վիճակի է հայտնաբերել:**

1. **Միջոցներ ձեռնարկի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ միչև տրանսպորտային միջոցը կանգնեցնելը**
2. Անմիջապես փոխել երթևեկության գոտին՝ առանց արագությունը նվազեցնելու, որպեսզի չխաթարվի երթուղային գրաֆիկը

Պատ.՝ 1

---

75. **Ավտոբուսի վարորդին թույլատրվու՞մ է կտրուկ արգելակել:**

1. Թույլատրվում, եթե ավտոբուսը հագեցած է ժամանակակից հակաարգելակման (ABS) և այլ արգելակման օժանդակ համակարգերով
2. Թույլատրվում է ցանկացած իրավիճակում, եթե վարորդը նախապես միացրել է վթարային լուսային ազդանշանը
3. **Թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար**
4. Չի թույլատրվում

Պատ.՝ 3

---

76. **Եթե ավտոբուսի վրա տեղադրված է «Արագության սահմանափակում» ճանաչման նշանը, ապա այդ ավտոբուսի վարորդին՝**

1. Թույլատրվում է գերազանցել այդ արագությունը միայն ճանապարհի այն հատվածում, որտեղ արագության սահմանափակումը մեծացվել է համապատասխան ճանապարհային նշանի տեղադրմամբ
2. **Արգելվում է գերազանցել ճանաչման նշանի վրա նշված արագությունը**
3. Թույլատրվում է գերազանցել նշանի վրա նշված արագությունը, եթե երթևեկում է ավտոմայրուղով
4. Թույլատրվում է գերազանցել նշված արագությունը 20կմ/ժ -ով, եթե դա անհրաժեշտ է վազանցն ավարտելու համար

Պատ.՝ 2

---

77. **Թույլատրվու՞մ է երթուղային ավտոբուսի վարորդին երթևեկել շատ ցածր արագությամբ:**

1. **Թույլատրվում է, եթե դա խոչընդոտ չի ստեղծում մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությանը**
2. Արգելվում է, քանի որ այդ դեպքում կխախտվի երթուղային գրաֆիկը
3. Արգելվում է բոլոր դեպքերում

Պատ.՝ 1

---

78. **Բնակելի գոտիներում ավտոբուսի վարորդին արգելվում է**

1. **միջանցիկ երթևկությունը:**
2. կանգառը՝ աշխատող շարժիչով:
3. Երկուսն էլ:

Պատ.՝ 1

---

79. **Բնակելի գոտիներում միկրոավտոբուսների վարորդներին արգելվում է՝**

1. **ուսումնական վարումը:**
2. կայանման համար նախատեսված և նշաններով կահավորված (կամ) գծանշված տեղերից դուրս կայանելը:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

80. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կոշտ կցիչով քարշակել մեկ այլ տրանսպորտային միջոց, եթե քարշակվող տրանսպորտային միջոցի ղեկին վարորդ չկա:**

1. Արգելվում է, քանի որ ցանկացած տեսակի քարշակման ժամանակ քարշակվող տրանսպորտային միջոցի ղեկին վարորդի ներկայությունը պարտադիր է
2. **Թույլատրվում է, եթե կոշտ կցիչի կառուցվածքն ուղղագիծ երթևեկության ժամանակ ապահովում է քարշակվող տրանսպորտային միջոցի ընթացքը քարշակողի հետագծով**

Պատ.՝ 2

---

81. **Ավտոբուսով մեկ այլ տրանսպորտային միջոց ճկուն կցիչով քարշակելիս ճկուն կապող օղակը նկատելի դարձնելու համար առնվազն քանի՞ նախազգուշացնող հարմարանք (դրոշակ կամ վահանակ) պետք է ամրացվի դրա վրա:**

1. Յուրաքանչյուր մետրի վրա մեկ հատ
2. **Առնվազն երկու նախազգուշացնող հարմարանք**
3. Առնվազն մեկ նախազգուշացնող հարմարանք

Պատ.՝ 2

---

82. **Քարշակման ժամանակ թույլատրվու՞մ է կիրառել ցանկացած կառուցվածքի կամ երկարության կոշտ կցիչ:**

1. **Չի թույլատրվում, քանի որ կոշտ կցման հարմարանքի կառուցվածքը պետք է համապատասխանի ստանդարտների պահանջներին**
2. Թույլատրվում է, եթե կոշտ կցիչի վրա տեղադրված են առնվազն երկու նախազգուշացնող կարմիր-սպիտակ դրոշակներ

Պատ.՝ 1

---

83. **Թույլատրվու՞մ է ավտոբուսով քարշակել այնպիսի տրանսպորտային միջոց, որի ապակեմաքրիչները և կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները չեն աշխատում:**

1. **Թույլատրվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ քարշակվող տրանսպորտային միջոցի ղեկավարումն իրականացվում է վարորդի կողմից**
2. Արգելվում է ցանկացած եղանակի պայմաններում, քանի որ ապակեմաքրիչների անսարքության դեպքում տրանսպորտային միջոցի ցանկացած տեղաշարժ երթևեկելի մասով արգելվում է

Պատ.՝ 1

---

84. **Թույլատրվու՞մ է քարշակել այն ավտոբուսին, որի ղեկային կառավարումը չի գործում:**

1. **Թույլատրվում է մասնակի բեռնման եղանակով քարշակելիս**
2. Արգելվում է ցանկացած եղանակով, ղեկային համակարգի անսարքության դեպքում տրանսպորտային միջոցը կարող է տեղափոխվել բացառապես տարհանման միջոցով

Պատ.՝ 1

---

85. **Թույլատրվու՞մ է 3 տոննա փաստացի զանգված ունեցող ավտոբուսին քարշակել չգործող արգելակային համակարգով թեթև մարդատար ավտոմեքենա, որի փաստացի զանգվածը 1.7 տոննա է:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---

86. **Թույլատրվու՞մ է 3 տոննա փաստացի զանգված ունեցող ավտոբուսին քարշակել չգործող արգելակային համակարգով թեթև մարդատար ավտոմեքենա, որի փաստացի զանգվածը 1.3 տոննա է:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է միայն կոշտ կցիչով**

Պատ.՝ 2

---

87. **Ի՞նչ փաստաթղթեր պետք է պարտադիր իր մոտ ունենա անհատական կարգով վարել սովորեցնողը:**

1. Սահմանված կարգով տրված՝ վարում սովորեցնելու իրավունքի փաստաթուղթ
2. **Տվյալ կարգի տրանսպորտային միջոցների վարելու իրավունքի վարորդական վկայական**
3. Երկուսն էլ պետք է ունենա:

Պատ.՝ 2

---

88. **Ճի՞շտ է այն պնդումը, որ միջքաղաքային երթուղիներով երթևեկող ավտոբուսների սրահում մարդկանց թիվը չպետք է գերազանցի կահավորված նստատեղերի քանակը:**

1. Ո՛չ, ճիշտ չէ:
2. **Այո՛, ճիշտ է:**

Պատ.՝ 2

---

89. **Ճի՞շտ է այն պնդումը, որ երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող ավտոբուսների սրահում մարդկանց թիվը չպետք է գերազանցի կահավորված նստատեղերի քանակը:**

1. **Այո՛, ճիշտ է:**
2. Ո՛չ, ճիշտ չէ:

Պատ.՝ 1

---

90. **Ուղևորների իջեցման կամ նստեցման համար ավտոբուսի վարորդին ե՞րբ է թույլատրվում բացել սրահի դռները և երբ է թույլատրվում սկսել երթևեկությունը:**

1. Վարորդն իրավունք ունի դռները բացել կանգառին մոտենալիս՝ երբ ավտոբուսի արագությունն արդեն նվազագույն է, իսկ երթևեկությունը սկսել ,երբ արդեն կանգառում ուղևոր չկա
2. **Վարորդը պարտավոր է դռները փակ պահել մինչև տրանսպորտային միջոցի լրիվ կանգնելը և այն բացել միայն կանգ առնելուց հետո, իսկ երթևեկությունը սկսել միայն դռները լրիվ փակելուց հետո**

Պատ.՝ 2

---

91. **Մարդկանց փոխադրումն արգելվում է, եթե**

1. Ճբոսաշրջության երթուղիներով երթևեկող ավտոբուսի սրահում մարդկանց թիվը գերազանցում է կահավորված նստատեղերի քանակը:
2. Ավտոբուսի դռները կիսաբաց են:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

92. **Երեխաների կազմակերպված խմբերի փոխադրումն իրականացվում է**

1. **«Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով կահավորված ավտոբուսով:**
2. «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով կահավորված ավտոբուսով:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

93. **Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկել միջմարզային և միջքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսներին՝ բնակավայրերից դուրս բոլոր ճանապարհներին:**

1. **90կմ/ժ**
2. 110կմ/ժ
3. 60կմ/ժ

Պատ.՝ 1

---

94. **Թույլատրվու՞մ է միջքաղաքային ավտոբուսի վարորդին բնակավայրերից դուրս գերազանցել 70կմ/ժ արագությունը:**

1. Թույլատրվում է ավտոմայրուղիներում 110կմ/ժ արագությունը
2. **Թույլատրվում է, եթե չի գերազանցում 90կմ/ժ արագությունը**
3. Արգելվում է

Պատ.՝ 2

---


95. **Թույլատրվու՞մ է զբոսաշրջային ավտոբուսներին բնակավայրերից դուրս երթևեկել 70կմ/ժ արագությամբ:**

1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

96. **Զբոսաշրջային ավտոբուսի վարորդին թույլատրվու՞մ է արդյոք ուղևոր վերցնել նշված իրավիճակում:**



1. Այո
2. **Ոչ**
3. Այո, եթե չի խոչընդոտի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 2

---

97. **Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում զբոսաշրջային ավտոբուսներին երթևեկությունն ավտոմայրուղիներով:**

1. 70կմ/ժ
2. **90կմ/ժ**
3. 100կմ/ժ
4. 110կմ/ժ

Պատ.՝ 2

---

98. **Այս նշանով կահավորված ճանապարհներին միջմարզային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթևեկելու ոչ ավելի քան**



1. 90կմ/ժ արագությամբ
2. 70կմ/ժ արագությամբ
3. **60կմ/ժ արագությամբ**

Պատ.՝ 3

---

99. Այս նշանով կահավորված ճանապարհների միջքաղաքային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթևեկել ոչ ավելի, քան՝



1. **90կմ/ժ**
2. 70կմ/ժ
3. 60կմ/ժ

Պատ.՝ 1

---

100. Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող է երթևեկել մերձքաղաքային ավտոբուսի վարորդը տվյալ իրավճակում:



1. 60կմ/ժ
2. 70կմ/ժ
3. **90կմ/ժ**

Պատ.՝ 3

---

101. Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում ավտոբուսների երթևեկությունը «Բնակելի գոտի» և «Բնակելի գոտու վերջ» նշաններով կահավորված տարածքներում:

1. 60կմ/ժ
2. **20կմ/ժ**
3. 40կմ/ժ

Պատ.՝ 2

---

102. Ի՞նչ արագությամբ կարող է շարունակել երթևեկությունը ավտոբուսի վարորդը տվյալ ճանապարհային նշանով նշված գոտում:



1. **Ոչ պակաս 60կմ/ժ, բայց ոչ ավելի քան 90կմ/ժ**
2. Ոչ պակաս 60կմ/ժ, բայց ոչ ավելի քան 70կմ/ժ
3. Ոչ ավելի, քան 60կմ/ժ

Պատ.՝ 1

---

103. Այս նշանի առկայության դեպքում ինչ առավելագույն արագությամբ երթևեկելու իրավունք ունեն միջմարզային ավտոբուսների վարորդները:



1. 60կմ/ժ
2. 70կմ/ժ
3. **90կմ/ժ**
4. 110կմ/ժ

Պատ.՝ 3

---

104. Ավտոբուսով թեթև մարդատար ավտոմեքենա քարշակելիս թույլատրվում է երթևեկել ոչ ավելի քան

1. 90կմ/ժ:
2. 60կմ/ժ:
3. **50կմ/ժ:**

Պատ.՝ 3

---

105. **Ի՞նչ պետք է ձեռնարկի ավտոբուսի վարորդը, եթե դարձափոխային գոտիով երթևեկելիս անջատվում է դարձափոխային լուսացույցը:**

1. Շարունակի երթևեկել մինչև մոտակա խաչմերուկը, որից հետո վերադասավորվի գծանշումից դեպի աջ
2. **Պետք է անհապաղ վերադասավորվի գծանշումից դեպի աջ**

Պատ.՝ 2

---

106. **Ավտոբուսներին թույլատրվու՞մ է բնակելի գոտիներում միջանցիկ երթևեկությունը:**

1. Թույլատրվում է միայն այնտեղ բնակվող բնակիչներին
2. Թույլատրվում է դրա համար նախատեսված տեղերում
3. **Արգելվում է**
4. Թույլատրվում է ցանկացած դեպքում, եթե դրա անհրաժեշտությունը կա

Պատ.՝ 3

---

107. **«Երեխաների կազմակերպված խմբերի փոխադրում» է համարվում՝**

1. Նախադպրոցական և դպրոցական տարիքի 3 և ավելի երեխաների կազմակերպված փոխադրում:
2. **Մեխանիկական տրանսպորտային միջոցով (բացառությամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների) նախադպրոցական և դպրոցական տարիքի 2 և ավելի երեխաների կազմակերպված փոխադրում:**

Պատ.՝ 2

---

108. **Եթե երթևեկելի մասը գծանշումով բաժանված է գոտիների, ապա ավտոբուսի վարորդին թույլատրվում է հատել ընդհատվող գծերը**

1. Ինտենսիվ երթևեկության դեպքում, երբ բոլոր գոտիները զբաղված են:
2. **Միայն վերադասավորվելիս:**
3. Ցանկացած դեպքում:

Պատ.՝ 2

---

109. **Թույլատրվու՞մ է մառախուղի պայմաններում ավտոբուսով քարշակում իրականացնել:**

1. Չի թույլատրվում
2. **Թույլատրվում է ոչ ավելի, քան 50կմ/ժ արագությամբ**

Պատ.՝ 2

---

110. **Դեպի աջ գոտի վերադասավորվող ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում**



1. **Չպետք է խոչընդոտ ստեղծի թեթև մարդատար ավտոմոբիլին:**
2. Ունի առավելություն, քանի որ ավարտում է վազանցը:
3. Ունի առավելություն, քանի որ ավտոբուսի վրա միացված է աջ շրջադարձի ցուցիչը:

Պատ.՝ 1

---

111. **Ճանապարհի կենտրոնական մասով երթևեկող ավտոբուսի վարորդի գործողությունները համապատասխանու՞մ են ճանապարհային երթևեկության կանոնների պահանջներին:**



1. Համապատասխանում են
2. Համապատասխանում են, եթե բացակայում են հանդիպակաց տրանսպորտային միջոցները
3. **Չեն համապատասխանում**

Պատ.՝ 3

---

112. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը ճանապարհը զիջել թեթև մարդատար ավտոմոբիլին:**



1. Պարտավոր է
2. **Պարտավոր չէ**

Պատ.՝ 2

---

113. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը ճանապարհը զիջել բեռնատար ավտոմոբիլին:**



1. Պարտավոր է
2. Պարտավոր է, եթե բեռնատար ավտոմոբիլը սկսել է վերադասավորվել աջ
3. **Պարտավոր չէ**

Պատ.՝ 3

---

114. Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին տվյալ իրավիճակում կատարել աջ շրջադարձ:



1. Թույլատրվում է միայն երթուղային ավտոբուսի վարորդին
2. **Թույլատրվում է ցանկացած ավտոբուսի վարորդին**

Պատ.՝ 2

---

115. Թույլատրվու՞մ է 3.5 տոննայից ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող ավտոբուսի վարորդին բնակավայրում նշված հետագծով վերադասավորվել երրորդ գոտի և կատարել կանգառ:



1. **Թույլատրվում է**
2. Չի Թույլատրվում

Պատ.՝ 1

---

116. Դուք վարում եք երթուղային ավտոբուս և մտադիր եք կատարել հետադարձ: Ի՞նչ պետք է անեք այս իրավիճակում:



1. Առաջինը կկատարեք մանևրը, քանի որ երթուղային ավտոբուսներին խաչմերուկներում հետադարձ կատարելիս տրվում է անցման առաջնահերթություն
2. **Պարտավոր եք ճանապարհը զիջել թեթև մարդատար ավտոմոբիլին**

Պատ.՝ 2
